

Թիւն կը քարոզէր, զոր Սիմէոն կաթողիկոս ինքնին այսպէս կը բացատրէ. «Եւ անդ յայտնէ զպէսպէս լօթերական աղանդս.», «Լօթերական» կ'անուանէ Սիմէոն կաթողիկոս յաճախ կաթողիկէները, ինչպէս ի մասնաւորի Մխիթարեան Հայրերը (Զամբոն, էջ 44):

Այս միջոցին կը մեռնի Արծաթահանք քաղաքի (կիւմիշխանէ) Առաջնորդը: Արծաթահանք թէպէտ Օսմանեան հողին մէջ էր՝ սակայն Տէրունի էր, Էջմիածնի Աթոռին ուղղակի իրաւասութեան տակ, որով Էջմիածնի կաթողիկոսին իրաւունքն էր Առաջնորդ անուանելը: Ըստ օրինի քաղաքին ժողովուրդը Յակոբ կաթողիկոսին մահնար (աղերսագիր ստորագրութիւններով) կը զօկեն, եւ կը խնդրեն որ իրենց Առաջնորդ մը կարգուի: Կաթողիկոսն ալ Գեանձեցի (Գանձակեցի) Պետրոս Ա.ն Առաջնորդ կ'անուանէ:

Երբ Գէորգ Եպիսկոպոս կը լսէ Արծաթահանքի Առաջնորդին մահը՝ Պոլիս կը փութայ եւ նշանաւոր իշխաններու կը դիմէ, ինչպէս կ'ըսէ Սիմէոնի Յիշատակարանը, մանաւանդ Պուռուռուց Պետրոս հացագործ իշխանին, որպէս զի Պատրիարքին մօտ միջնորդեն՝ զինքն Արծաթահանքի Առաջնորդ կարգելու: Յակոբ Նալեան Պատրիարքն, որ յառաջագոյն Արաբկիրի Առաջնորդութեան համար, որ նոյնպէս Տէրունի թեմ էր, ինքը «Ֆերման» հանած էր իր իսկ անուանած Առաջնորդին, Գէորգ Եպ.ին համար ալ «Ֆերման» հանել կու